

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

27 փետրվարի 2019թ.
ք. Երևան

N 21-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԻԾ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ (ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ
ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ) ԳՐԱՆՑՈՒՄԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ Հովհաննես Մարգարյանի 26.12.2018թ. դիմումը բավարարվել և Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր 27.12.2018թ. N 179-Ա որոշմամբ գրանցել է քաղաքացիական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխությունների նախագիծ ներկայացրած նախաձեռնող խմբին և որպես նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ՝ Հովհաննես Մարգարյանին: Նույն որոշմամբ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու նախաձեռնության իրավունք ունեցող առնվազն 200.000 քաղաքացիների ստորագրությունների հավաքման համար ամրագրված 45-օրյա ժամկետ է սահմանվել 2018 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2019 թվականի փետրվարի 10-ը:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենքով սահմանված ժամկետում սույն օրենքով պահանջվող նվազագույն քանակի ստորագրություններ հավաքելու դեպքում ոչ ուշ, քան սույն օրենքի 13-րդ հոդվածի 19-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 15-րդ օրը, նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչը դիմում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ ներկայացնելով ստորագրված ձևաթերթիկները: Նոտարական կարգով տրված ստորագրությունները կարող են ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով դրանք տված անձանց կամ նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից մինչև սույն մասով սահմանված ժամկետի ավարտը:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 15-օրյա ժամկետը լրացել է 2019 թվականի փետրվարի 25-ին և նշված ժամանակահատվածում նախաձեռնող խումբը Կենտրոնական ընտրական հանձնաժողով չի դիմել և ստորագրված ձևաթերթիկներ չի ներկայացրել, իսկ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում 28.12.2018-10.02.2019թթ. առցանց ստորագրահավաք կազմակերպելու հնարավորություն տվող «Էլեկտրոնային եղանակով ստորագրությունների համակարգ»-ով տրվել է մեկ ստորագրություն:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Նախաձեռնող խմբի գրանցումը դադարեցվում է՝

2) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողով չդիմելու դեպքում.»:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով և 8-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Դադարեցնել քաղաքացիական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխությունների նախագիծ ներկայացրած նախաձեռնող խմբի և Հովհաննես Մարգարյանի՝ որպես նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի գրանցումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մ ու կ ու չ յ ա ն